

ՀՈԳԵԳԱՅԻՄՍ

11 ՄԱՅԻՍ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Բացատրութիւն	Էջ 2-3
Սերտողութիւն՝ Մատթէոսի Աւետարանին	Էջ 3-4
Ժամանակացոյց եւ Ծանուցում	Էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ
 «ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»
 ԳԻՐՔԷՆ
 (2.1-21)

Երբ Պենտէկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները միասնաբար մէկտեղուած էին: Յանկարծ սաստիկ հովի մը սոււոցին պէս ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը ուր անոնք նստած էին: Յետոյ անոնք հրեղէն լեզուներ տեսան, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներ խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Այն օրը Երուսաղէմ քաղաքը լեցուն էր բարեպաշտ հրեաներով, որոնք աշխարհի չորս կողմերէն եկած էին: Երբ այս ձայնը լսուեցաւ, մեծ բազմութիւն մը եկաւ խոնուեցաւ այնտեղ եւ բոլորը անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին թէ ի՛նչպէս անոնք իրենցմէ իւրաքանչիւրին լեզուով կը խօսէին: Ամէնքն ալ սքանչացումով եւ զարմանքով կ'ըսէին իրարու. «Այս խօսողները բոլորն ալ գալիլիացիներ չե՞ն միթէ. ի՞նչպէս կ'ըլլայ որ մեր ծննդավայր երկիրներու լեզուներով կը խօսին, ինչպէս ահաւասիկ կը լսենք: Զէ՞ որ ահա մեր մէջ կան պարթեւներ, մարեր, ելամացիներ, միջագետցիներ, հրեաներ, կապադովկիացիներ, պոնտացիներ, ասիացիներ, փոիւզիացիներ եւ պամփիլիացիներ, եգիպտացիներ, Կիւրենիայի շրջանէն լիպիացիներ, Հռոմէն եկած հրեայ եւ հրէութեան դարձած այցելուներ, կրետացիներ եւ արաբիացիներ: Եւ ահա բոլորս ալ մեր լեզուներով իրենցմէ կը լսենք Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին»: Ապշահար, անոնք զարմանքով կը հարցընէին իրարու. «Ի՞նչպէս կարելի է բացատրել ասիկա»: Իսկ ոմանք կատակելով կ'ըսէին. «Նոր գինիով գինովցած են»:

Այն ատեն Պետրոս տասնըմէկ առաքեալներուն հետ ոտքի ելաւ եւ բարձրաձայն սկսաւ անոնց խօսիլ.-

«Ո՛վ հրէաստանցիներ եւ դուք որ հիմա Երուսաղէմ կը գտնուիք. իրականութիւնը գիտնալու համար լսեցէ՛ք ինչ որ պիտի ըսեմ: Դուք կը կարծէք թէ ասոնք գինով են. բայց այդպէս չէ, որովհետեւ առտուան ժամը ինն է դեռ: Մինչդեռ ասիկա կատարուում է Յովէլի մարգարէութեան որ կ'ըսէ.

“Այնուհետեւ երբ վերջին օրերը գան, - կ'ըսէ Աստուած, - իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղաքն ու աղջիկները իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի, ձեր երիտասարդները տեսիլներ պիտի ունենան եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն:

Այն օրերուն իմ Հոգիս պիտի թափեմ նաեւ իմ ծառաներու եւ աղախիկներու վրայ, եւ անոնք եւս իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի:

Երկիւնքի բարձունքին վրայ հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝ վաղը երկրի վրայ. աշխարհ արիւնով, կրակով ու թանձր ծովով պիտի լեցուի, արեւը պիտի խաւարի եւ լուսինը արիւնի գոյն պիտի առնէ, եւ ի վերջոյ պիտի հասնի Տիրոջ մեծ եւ անեղ օրը: Այն ատեն ով որ Տէրը օգնութեան կանչէ՝ պիտի փրկուի”»:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
 ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
 (14.25-31)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-

«Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Միխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի զրկէ իմ անունովս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովիք եւ մի՛ վախճաք: Լսեցիք ինչ որ ըսի ձեզի, թէ “Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի”: Եթէ զիս կը սիրէք, ուրախ պիտի ըլլաք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն ունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ եւ ա՛յդ է պատճառը որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք, երթանք այստեղէն»:

ՅԻՆՈՒՆՔԻ ՅԻՍՈՒՆԵՐՈՐԴ ՕՐ (ԾԻՍԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹՅԱՆԵՐ - ԹԻՒ 16)

ԺԶ.

ՊԵՏԵՄՈՍՏ ԿԱ ՀՈԳԵՎՈՒՄՍ

Հարցումներ.

- 1.- Անուններո՞ւն մասին, եւ աւանդութեա՞ն:
- 2.- Դէ՞պքը:
- 3.- Բարեխոյնի աշտարակաշինութեան աղէտը եւ լեզուներով խօսելու հարցը:
- 4.- Ս. Գրային ընթերցումները:

Պատասխաններ.

1.- Զատիկէն մինչեւ այս տօնը՝ յիսուն օրեր կ'ընէ: «Պենտէկոստէ»ն յունարէն «Փենթիկոսթի» բառն է, որ «յիսուներորդ» կը նշանակէ: Եբրայական աւանդութեան մէջ կայ Շաբաթներու տօնը (այս տօնին համար Ս. Գիրքը կու տայ երկու ուրիշ անուններ ալ. «Եբրայաբնորդ տօն» կամ «Առաջին բերքի տօն»): Ըստ Մովսիսական օրէնքին, Պատէֆէն սկսեալ՝ եօթ շաբաթներ կը հաշուէին, որ 49 օրեր կ'ընէ, եւ անոնց լրումին յաջորդ օրը կը կատարէին այս տօնը: Եօթ շաբաթներ հաշուելու օրէնքէն յառաջացած էր «Շաբաթներու տօն» անունը:

Շաբաթներու տօնին կ'ամբողջանար գարնանային հունձի շրջանը, եւ նկատի ունենալով, որ արմտիքները կը հնձէին այն ատեն, օրէնքը կը պահանջէր «նոր հացի ընծայ» մատուցել Աստուծոյ՝ իբր երախայրիք (Ղւ 23.16, 17): Մատուցման օրը «սուրբ ժողովի օր» պէտք է ըլլար (նոյն, 21-րդ հմբ):

Ըստ ռաբբիական աւանդութեան մը (հաւանաբար Յ. Ք. 3-րդ դարու), Շաբաթներու տօնը տարեդարձն էր Սինէական Օրէնքին տրււածութեան, որուն շնորհիւ Յակոբի սերունդները մէկ ժողովուրդ պիտի ըլլային:

Նոր Կտակարանեան ժամանակներուն, հունձի գաղափարը Մեսիայի սպասման վախճանաբանական նշանակութիւն մըն ալ պիտի հագնէր (Մտ 13.39): Եւ Քրիստոսի հետեւորդներուն համար Մեսիան՝ յարուցեալ Յիսուսը եղաւ, որ Հօր Աջ Կողմը նստած Տէրն է:

Այս էր կարգը եւ ոգին, երբ կը պատահէր Ս. Հոգիին գալուստը (= Հոգեգալուստ)՝ Զատիկէն յիսուն օրեր ետք:

2.- Հոգեգալուստի դէպքը նկարագրուած է Առաքեալներուն Գործերը գիրքին մէջ (ԱԳ 2.1-42):

Նախքան իր համբարձումը Քրիստոս հետեւեալ խոստումը կու տար իր առաքեալներուն. «Երուսաղէմէն մի՛ հեռանաք, սպասեցէք մինչեւ ստանաք Հօր խոստումը, որուն մասին խօսեցայ ձեզի: Յովհաննէս ջուրով մկրտեց, բայց դուք Ս. Հոգիով պիտի մկրտուիք մօտ ատենէն» (ԱԳ 1.4-5): Արդ, Հոգեգալուստի դէպքը այդ խոստումին կատարումն էր: Ղուկաս աւետարանիչ կը դրուագէ, թէ Պենտէկոստէի օրը Քրիստոսի հետեւորդները

տան մը մէջ (գուցէ Վերնատան) մէկտեղուած էին, երբ յանկարծ «աստիկ հովի մը սուլոցին պէս ձայն մը» կը հնչէր երկինքէն եւ կը լեցնէր վայրը: Ժողովեալները կը տեսնէին «հրեղէն լեզուներ», որոնք կը տարածուէին եւ կը հանգչէին իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Ս. Հոգիով կը լեցուէին եւ կը սկսէին «տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Ս. Հոգին խօսիլ կու տար»:

Աստիկ ձայնը կը լսուէր տունէն դուրս, եւ «աշխարհի բոլոր երկիրներէն» ուխտաւոր հրեաներէ եւ հրէութեան դարձած նորահաւատներէ «մեծ բազմութիւն մը» կու գար եւ կը խոնուէր տան մէջ, ու անակնկալի եկած կը լսէր, թէ ինչպէս հաւատացեալները տարբեր լեզուներով կը խօսին, հակառակ որ ամէնքն ալ գալիլիացիներ էին: Դէպի տունը փութացած բազմութեան մէջ կային պարթեւներ, մարեր, ելամացիներ, միջագետացիներ, հրէաստանցիներ*, կապադովկիացիներ, պոնտացիներ, ասիացիներ**, փոքիացիներ եւ պամփիլիացիներ, եգիպտացիներ, Կիբենիայի շրջանէն լիպիացիներ, Հոռոմէն եկածներ, կրետացիներ եւ արաբացիներ: Անոնցմէ ոմանք ապշահար եւ շփոթահար կը լսէին, թէ հաւատացեալները «Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին» կը խօսին: Եւ հարց կու տային թէ՛ «Ինչպէ՞ս կարելի է բացատրել ասիկա», իսկ ոմանք ալ ծաղրաւնով կ'ըսէին՝ «Նոր գինիով արբեցած են»:

Ահա Պետրոս Առաքեալ կը կանգնէր եւ ճառ մը կ'նկղղէր, որուն առաջին բաժնով «տարբեր լեզուներով խօսիլ» կը բացատրէր իբր կատարումը Յովէլի մարգարէութեան 2.28-32 հատուածին: Ապա ան, հաւանաբար, յատուկ շեշտով մը կ'արտասանէր մարգարէութեան կանխատեսութիւնները վերջին օրերուն Աստուծոյ Հոգիի հեղման՝ իր ծառաներուն եւ աղայիներուն վրայ: Ճառին երկրորդ բաժնով Առաքեալը կ'ակնարկէր Աստուծոյ «սահմանած ծրագրին եւ կանխագիտութեան», ըստ որուն՝ Յիսուս խաչուելով պիտի սպանուէր, սակայն յարուիրն առնելով «մահուան կապանքները» պիտի փշրէր, որով ցոյց տար՝ թէ մահը չէր կրնար իշխել իր վրայ: Ետքը Դաւիթ թագաւորէն մէջբերելով՝ յարուցեալ եւ Հօր Աջ Կողմը նստած Քրիստոսի խորհուրդին մասին կը վկայէր:

3.- Յստակօրէն, Հոգեգալուստան լեզուախօսութիւնը որեւէ կապ չունի Կորնթոսի «լեզուախօսութիւն»ին հետ, որուն այնքան փարած են մանաւանդ ժամանակակից բողոքական եկեղեցիներ, եւ յատկապէս անոնց Հոգեգալուստական (Pentecôtiste) ու Պարգեակեղորոն (Charismatique) համայնքները, եւ ինչ թիրիմացութիւններու հասած: Հոգեգալուստան լեզուախօսութիւնը յօդաւորեալ լեզուներով (յունարէն, արաբերէն եւ այլն) խօսիլ է, իսկ Կորնթոսեան լեզուախօսութիւնը՝ ոչ-յօդաւորեալ լեզուներով, որոնք անորոշ ձայներ եւ անհասկնալի «խօսք»եր են: Ս. Գիրքի աւանդական մեկնաբանութիւնը Հոգեգալուստը հասկցած է իբր հակատիպը Բաբելոնի աշտակարաշինութեան: Բաբելոնի

ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Աստուածաշունչին մէջ գրական սեռ մըն է «աւետարան»ը:

Ինչպէս ծանօթ է, Նոր Կտակարանը ունի չորս աւետարաններ: Անոնք չորս տարբեր հեղինակներու կողմէ գրուած են. Մատթէոս, Մարկոս, Լուկաս եւ Յովհաննէս:

Ինչն՞չ համար այս գիրքերը «աւետարան»ներ կոչուած են:

Իր առաքելութեան առաջին իսկ օրէն, Յիսուս խօսեցաւ Աւետարանին մասին:

Մարկոս աւետարանիչ գրած է. «Ան (Յիսուս) Աստուծոյ Աւետարանը կը քարոզէր, ըսելով՝ Փրկութեան ժամանակը հասած է եւ եկած Աստուծոյ արքայութիւնը. ապաշխարեցէ՛ք եւ հաւատացէ՛ք Աւետարանին» (Մկ 1.14-15):

Ի՞նչ կը նշանակէ այս «Աւետարան»ը:

Հարցումին պատասխանը Յիսուսի յայտարարութեան մէջն է: Յիսուսի յայտարարութիւնը բարի լուր մը կամ աւետիս մը կը բովանդակէ: Ուրեմն, Յիսուսի Աւետարանը բարի լուր մը կամ աւետիս մը կը ներկայացնէ: Շփոթութեան մը առաջըր առնելու համար ըսեմ, որ Նոր Կտակարանին մէջ, Աւետարանը գիրքի իմաստ չունի. Աւետարանին իբր գիրք ընկալումը յետագայի երեւոյթ է եւ բնագրային չէ:

Յիսուսի քարոզած Աւետարանը մեզի կը յայտնէ, թէ փրկութեան եւ Աստուծոյ արքայութեան ժամանակը հասած է եւ եկած: Այս քարոզութիւնը միաժամանակ կոչ է ապաշխարելու եւ հաւատալու Աւետարանին: Այդ կոչին ընդառաջելուն մէջ կ'ամբողջանայ Աւետարանին ճշմարիտ հասկացողութիւնը: Փրկութեան ժամանակը հասած եւ Աստուծոյ արքայութիւնը եկած է այն մարդուն համար, որ կ'ապաշխարէ եւ կը հաւատայ: Հետեւաբար, Աստուծոյ Աւետարանը անոր համար բարի լուր կը ներկայացնէ, որ ապաշխարութեան եւ հաւատքի ճանապարհին վրայ է:

Փրկութիւնը եւ Աստուծոյ արքայութիւնը մեզի մատուցուած են ճիշդօրէն, առանց որեւէ պայմանի: Անոնք մեզի մատուցուած են իբր շնորհք:

Ե՞րբ է որ շնորհք մը՝ շնորհք կ'ըլլայ: Եթէ ազատ մարդու մը ըսենք՝ «Ազատ ես», ի՞նչ շնորհք ըրած կ'ըլլանք: Ոչինչ: Բայց բանտարկեալ մարդուն եթէ ազատութիւն տանք, այն ատեն շնորհք ըրած կ'ըլլանք: Նոյնպէս երբ մահապարտին ազատութիւն տանք՝

լեզուախառնումով «մէկ ժողովուրդ»ի անդամներուն միջեւ անհասկացութիւնը պիտի տարածուէր, եւ անոնք սփռուէին «ամբողջ աշխարհի երեսին վրայ»: Մինչդեռ Ս. Հոգիին գալուստը պիտի ըլլար հիմնարար փորձառութիւնը, երբ գիրար չհասկցող բազմաթիւ ժողովուրդներ՝ «մէկ ժողովուրդ» պիտի ըլլային՝ ոչ թէ մինչեւ երկինք հասնող ամբարտաւանութեան աշտարակը շինելու համար, այլ մինչեւ երկիր հասած Աստուծոյ արքայութեան ծառայելու, գայն հաստատելու ամենօրեայ առաքելութեամբ:

Լեզուախօսութեան առնչութեամբ հարկ է ուշադիր կարդալ Պօղոս Առաքեալի Կորնթացիներուն գրած Ա. Նամակին նախ 14-րդ գլուխը եւ ապա 13-րդը: Անհրաժեշտ է որ Եկեղեցին կարգ ու կանոնի մէջ ըլլայ: Եթէ «լեզուախօսութիւն» ըսուածը Աստուծոյ «մէկ ժողովուրդ»ի ստեղծումին չի ծառայեր, ապա անիկա Բաբելոնի աշտարակաշինութեան համար է՝ անգիտակցաբար կամ սատանայական հաճութեամբ:

4.- Այս օրուայ Ս. Գրային ընթերցումներն են՝ Առաքեալներուն Գործերը գիրքէն՝ 2.1-21-ը, եւ Յովհաննէսի աւետարանին 14.25-31-ը:

Առաջին ընթերցումը: Կը պատմէ Պենտեկոստէի օրը Ս. Հոգիին էջքը Քրիստոսի հետեւորդներուն վրայ եւ անոնց տարբեր լեզուներով խօսիլը: Նաեւ կը ներկայացնէ Պետրոս Առաքեալի ճառը:

Երկրորդ ընթերցումը: Յիսուս իր աշակերտներուն կը յայտնէ, թէ Հայրն Աստուած Միթաքիչը՝ Ս. Հոգին պիտի դրկէ իր՝ այսինքն Քրիստոսի իսկ անունով: Ս. Հոգին գալով ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ Յիսուս ըսած էր: Առ Հայր մեկնելէն առաջ, Յիսուս իր խաղաղութիւնը կը թողու հաւատացեալներուն: Եւ իր խաղաղութիւնը «այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է», որովհետեւ իր երթալը՝ դէպի Հայր Աստուածը երթալ է, եւ ոչ թէ դէպի ոչնչութիւն. իր երթալը վերադարձ ունի. Քրիստոս կրկին պիտի գայ: Ան յաղթական Տէրն է:

Երկու հատուածներուն միտք բանին. Ս. Հոգին Քրիստոսի հաւատացողներուն «մէկ ժողովուրդ»ը կերտող Ս. Երրորդութեան երրորդ դէմքն է: Անոր պաշտօնը չորս է. ա.- Հոգեւորապէս փաշտելով. բ.- «Ամէն ինչ» սորվեցնել, եւ Յիսուսի խօսքերը յիշեցնել. գ.- Տարածել Աւետարանը. եւ գլխաւորը՝ դ.- Եկեղեցւոյ մէջ Քրիստոսի ամենաժամ եւ խաղաղարար վերադարձը յայտնել, մինչեւ աշխարհի վախճանին «մեծ եւ անեղ օրը»:

Հոգի
ԳՔ

* Հինէն յայտնուած է այն կարծիքը, թէ աշխարհագրական այս անուններուն կարգը կը սկսի արեւելքէն՝ Պարթեւներու երկրէն եւ արեւմուտքի՝ Հռոմի մէջ օղակուելով կը դառնայ Արաբիա, կարծէք շրջանակ մը դէք: Հետեւաբար, այս ուղղութեան մէջ «հրէաստանցիներ»ուն տեղ պէտք է «հայաստանցիներ» ըլլար, որովհետեւ Հայաստանն է, որ Միջագետքի եւ Կապադովկիոյ միջեւ կը գտնուէր:

** Փոքր ասիացիներ:

Հնորհք ըրած կ'ըլլանք, եւ ատիկա գերազանց
 Հնորհք կ'ըլլայ, որովհետեւ ենթական մահուան
 դատապարտութեան առջեւ էր եւ իրեն նոր
 կեանք Հնորհուեցաւ: Ճիշդ այս է Հնորհքը:
 Ինչպէս Եսայի մարգարէ ըսած էր եւ Մատթէոս
 աւետարանիչ վերբերած՝ խաւարի մէջ նստող
 ժողովուրդն է, որ արժանի կ'ըլլայ մեծ լոյսը
 տեսնելու (Հմմտ Ես 9.2, Մտ 4.16): Եւ Քրիստոսի
 ներկայութիւնը առաջին իսկ պահէն՝ այն մեծ
 լոյսն է որ կը ծագեցնէր: Արդ, Աւետարանին
 բարի լուրը իբր Հնորհք կը հասնի այն մարդուն,
 որ զայն կը սպասէ: Մինչդեռ Աստուծոյ
 փրկութեան եւ արքայութեան սպասումը
 Հունեցող մարդուն համար՝ Աւետարանը երբեք
 ալ բարի լուր չէ:

Քրիստոս կը զարմացնէ մեզ: Ան որեւէ բան
 չուզեց արձանագրել, հակառակ գրել-կարդալ
 գիտնալուն: Իսկ ինչո՞ւ զայն իրաւակերտներուն
 վստահեցաւ, եւ առաքեալները ինչո՞ւ համար
 ժամանակաւոր կերպով զայն գիրի վերածելու
 աշխատանք չըրին:

Անցեալին գրաւոր խօսքը յատուկ էր միայն
 քիչ թիւով անհատներու: Ո՞վ կրնար գիրք
 ունենալ, քանի՞ հոգիներ: Միայն՝ իշխանաւորը,
 հարուստը: Իսկ Աստուծոյ Աւետարանը առաջին
 հերթին իշխանաւորներուն կամ հարուստներուն
 ուղղուած չէր: Ուստի, պահանջքը կամ
 կարիքը չկար Աւետարանին անմիջականօրէն
 արձանագրութեան:

Ընդհակառակը, ժողովուրդի համեստ զանգուածները բերանացի
 քարոզութեան կամ խօսքին պէտք ունէին:

Բայց երբ առաքեալներուն քարոզութեան
 սահմանները ընդարձակուեցան, առաքեալները
 ամէն տեղ չէին կրնար հասնիլ, ուստի
 անհրաժեշտութիւնը զգացուեցաւ գրի առնելու
 Քրիստոսի առաքելութիւնը եւ պատգամը:
 Այդ անհրաժեշտութիւնը աւելի շեշտուեցաւ,
 երբ առաքեալներուն հետեւորդներ՝ սկսան
 քարոզել: Մարդիկ անդրադարձան, որ
 բերանացի պահպանման մէջ կայ վտանգ
 մը, թէ ժամանակի ընթացքին Քրիստոսի
 առաքելութեան պատմութիւնը եւ խօսքերը
 կրնան խեղաթիւրման ենթարկուիլ: Հետեւաբար,
 կարեւոր տեսան աւանդուածները արձանագրել՝
 անփոփոխ կերպով յաջորդող սերունդներուն
 փոխանցելու համար: Արձանագրութեան
 երրորդ պատճառ մըն ալ այն էր, որ ոմանք
 սկսան աւանդուածները իրենց նպատակներուն
 ծառայեցնել եւ զանոնք այլափոխել: Եւ
 ուստի Եկեղեցին արձանագրութեան գիմեց
 նաեւ ինքնապաշտպանութեան համար՝
 որպէսզի ապահովելով աւանդուածներուն
 անփոփոխութիւնը՝ ինքզինք անայլայլ պահէ:

(Շարունակելի 1)

**ՅԱԶՈՐԴ ՇԱՔԹՈՒՄ
 ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅ**

Երեքշաբթի, 13 Մայիս 2008
 10.00 > Ս. Գրային սերտողութիւն՝
 Ս. ՅԱԿՈԲ Զոյրերու ժողով

Հինգշաբթի, 15 Մայիս 2008
 11.00 > Աղօթաժողով՝
 Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով
 12.00 > Մայրերու օրուայ ճաշկերոյթ
 Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Շաբաթ, 17 Մայիս 2008
 18.30 > Ս. Գրային սերտողութիւն՝
 Հայ երիտասարդներուն համար

Կիրակի, 18 Մայիս 2008
 09.30 > Առաւօտեան ժամերգութիւն
 11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

**ՅԱՏՈՒԿ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ
 ԱՐԴԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ՝**

**ԱՌՎՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
 ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ**

ԱՄԷՆ ՇԱՔԱԹ ԵՐԵԿՈՆԵՐԸ
 ԺԱՄԸ 6:30

ՀԻՒԱՆՌԱԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ
 Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ. Տ.
 Գառնիկ Քինյ. Գոյունեանին.
 514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիւիմ: